ԱԶԴ

## Գերմանական ընկերությունները Հայաստանում

# «Ինտերմոթոր Արմենիա» ՀՁ ՓԲԸ

### *«Դայմլեր-Քրայսլեր» կոնցեռնի գլխավոր ներկայացուցիչը Հայաստանում*



Վաճառքի եւ տեխսպասարկման կենտրոնը Երեւանում



«Ինտերմոթոր Արմենիա» ընկերությունը հանդիսանում է «Դայմլեր-Քրայսլեր» կոնցեռնի գլխավոր ներկայացուցիչը Հայաստանում «Դայմլեր-Քրայսլեր» կոնցեռնի եւ «Ինտերմոթոր Արմենիա» ընկերության միջեւ համագործակցության պայմանագիրը կնքվել է դեռեւս 1998 թ.-ին: Առաջին գրասենյակը հիմնադրվել է 1999 թ. մարտ ամսին: Նույն թվականի նոյեմբեր ամսին հիմնադրվել է ընկերության առաջին ավտոսրահը, որը ներկայումս գործող մեքենաների վաճառքի կենտրոն է: 2000 թ. մայիսի 27-ին կայացավ «Մերսեդես-Բենց» վաճառքի եւ տեխսպասարկման կենտրոնի պաշտոնական բացումը:

«Ինտերմոթոր Արմենիայի» բաժնետերերն են «Ինտերմոթոր Երեւան» ՍՊԸ-ն՝ 75 % եւ «Ինտերմոթորս Լիմիթեդ Կիպրոսը»՝ 25 %: Ընկերությունը ստեղծել է ավելի քան 60 նոր աշխատատեղեր:

«Ինտերմոթոր Արմենիա» ընկերությունն առաջարկում է «Մերսեդես-Բենց» մարդատար եւ ուղեւորատարբեռնատար մեքենաների, օրիգինալ պահեստամասերի, աքսեսուարների եւ հուշանվերների վաճառք, ինչպես նաեւ իրականացնում է տեխսպասարկման, թափքի նորոգման եւ ներկման ծառայություններ «Մերսեդես-Բենց» ստանդարտներին համապատասխան սարքավորումներով զինված տեխսպասարկման արհեստանոցում, թափքի նորոգման եւ ներկման արտադրամասում:

Նույն թվականի հունիսի 8-ին «Ինտերմոթոր Արմենիա» ընկերությունը նշեց «Մերսեդես-Բենց» կենտրոնի բացման առաջին տարեդարձը: Պաշտոնական ընդունելությանը ներկա էին Հայաստանի տրանսպորտի եւ կապի նախարարը, Գերմանիայի արտակարգ եւ լիազոր դեսպանը, ընկերության հաճախորդներն ու գործընկերները:





Ընկերության նախագահ եւ ԱԺ պատգամավոր Մարտին Հովհաննիսյանը իր ելույթում նշեց, որ 2000 թ. հունվար-դեկտեմբեր ամիսների ընդհանուր վաճառքների ծավալը կազմել է մոտ 2.5 միլիոն ԱՄՆ դոլար, իսկ 2001 թ. հունվար-մայիս վաճառքների ծավալը՝ 2.3 միլիոն ԱՄՆ դոլար: Ներկայիս ներդրումների ընդհանուր գումարը կազմում է մոտ 4.9 մլն ԱՄՆ դոլար:

«Ինտերմոթոր Արմենիայի» հիմնական նպատակն է աջակցել Հայաստանում տրանսպորտային ոլորտի զարգացմանը, որը կնպաստի երկրի տնտեսության ընդհանուր զարգացմանը, մասնավորապես՝ արդյունաբերության, տուրիզմի եւ առեւտրի ոլորտների հա-

**Հասցե՝**
*Intermotor Armenia*
*General Distributor for*
*DaimlerChrysler in Armenia*
*Գայի պող. 14/3, Երեւան 375062*
***հեռ.՝ 58-12-75, 64-67-59***
*ֆաքս՝ 56-51-79*
*էլ-փոստ՝ intmot@mercedes-benz.am*

# «Եվրոմոթորս ՍՊԸ»

### *Դրեզիդենտ՝ Հովիկ Հայրապետյան*
### *Գլխավոր տնօրեն՝ Հովհաննես Մանուկյան*

Եվրոմոթորս ՍՊԸ-ն հիմնվել է 1998 թ. մայիսի 18-ին հայտնի գերմանական մեքենաշինական կոնցեռնի BMW-ի ներկայացուցիչը Հայաստանում դառնալու համար:

1999 թ. հունիսի 1-ին տեղափոխվելով Գ. Լուսավորչի 7 հասցեում գտնվող իր նոր հարկի տակ, Եվրոմոթորսը սկսում է Հայաստան ներմուծել BMW, իսկ հետագայում նաեւ Rover եւ LandRover մակնիշների նորագույն մոդելները:

3 ամիս աշխատելուց հետո, համոզվելով, որ պատրաստ է նրվաճելու ծառայությունների մատակարարման հայկական շուկայի համապատասխան մասը, ընկերությունը կազմակերպում է իր պաշտոնական բացման արարողությունը, որը տեղի է ունեցել 1999 թ. հոկտեմբերի 2-ին բազմաթիվ բարձրաստիճան հյուրերի ներկայությամբ եւ զվարճալի ծրագրի ուղեկցությամբ:

Եվրոմոթորս ՍՊԸ-ն զբաղվում է ոչ միայն ավտոմեքենաների եւ նրանց պահեստամասերի ներմուծմամբ եւ վաճառքով, այլեւ վերոհիշյալ մակնիշների բոլոր ավտոմեքենաների տեխսպասարկմամբ: Եվրոմոթորսի ներմուծած բոլոր պահեստամասերը կրում են



Original BMW պիտակը, եւ այցելուներին են առաջարկվում զեղչերի եւ երաշխիքների ճկուն համակարգով:

Եվրոմոթորսի տեխ. սպասարկման սրահում կան BMW, Rover եւ LandRover մակնիշների բոլոր ավտոմեքենաների վերանորոգման համար անհրաժեշտ սարքերն ու գործիքները, իսկ արհեստավարժ աշխատակիցները պարբերաբար հատուկ վերապատրաստում են անցնում BMW մայր-գործարանում:

Եվրոմոթորս ՍՊԸ-ն ակտիվ գործունեություն է ծավալում եւ հաջողությամբ մրցակցում նման բոլոր ընկերությունների հետ:

Այսօր Եվրոմոթորս ՍՊԸ-ն վաճառում է տարեկան շուրջ 25-30 նոր ավտոմեքենա եւ սպասարկում 2000 հաճախորդ:

Եվրոմոթորս ՍՊԸ-ն իր լավագույն մաղթանքներն է հղում գերմանացի ժողովրդին Միասնության օրվա առթիվ, միաժամանակ ցանկանալով նորանոր նվաճումներ:

***Հասցե՝***
*Գրիգոր Լուսավորչի 7,*
*375017 Երեւան*
*հեռ. 54 40 60, 54 40 80*
*ֆաքս՝ 54 44 04*
*էլ. փոստ՝ hbmtbmw@infocom.am*

